# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի մարզադպրոցի դահլիճի վերանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/27 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի ապրիլի 8-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/27 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի մայիսի 5 կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** 2026 թվականի մայիսի 5 կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված 2-ով հաստատված «Վճարման ժամանակացույց»-ը՝ ըստ 2026 թվականի մայիսի 5 կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2026 թվականի ապրիլի 8-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/27 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.16 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**